Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
„28„ 10 2021թ.
(արձանագրություն № 3)

Վավերացնում եմ
ռեկտոր՝ Վ.Ուռուտյան
„28„ 10 2021 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կանոնակարգը, այսուհետ՝ Կանոնակարգ, կարգավորում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի, այսուհետ՝ Համալսարան, առկա և հեռակա ուսուցման ձևերով բարձրագույն կրթություն ստացող ուսանողների գիտելիքների և կարողությունների ընթացիկ, միջանկյալ ու ամփոփիչ ստուգման և գնահատման ընթացակարգը:

1.2 Համալսարանում գործում է ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, որի համաձայն յուրաքանչյուր դասընթացից ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականը ձևավորվում է դասընթացի գնահատման բաղադրիչների տոկոսային արժեքներից:

1.3 Համալսարանում կիրառվում է նաև ձևավորող գնահատում, որը նկարագրում է ուսանողի ուսումնական ձեռքբերումները, բացահայտում բացթողումները և ուսումնառության հետ կապված դժվարությունները, վեր հանում դրանց հաղթահարման ուղիները:

1.4 Ուսանողների գիտելիքների ստուգումն ու գնահատումն իրականացվում է 100 միավորային սանդղակով (հավելված 1):

1.5 Ուսանողի կողմից դասընթացը համարվում է հանձնած, եթե տվյալ դասընթացի գնահատման բաղադրիչների գումարային միավորը մեծ կամ հավասար է 40-ի:

2. Գնահատման կարգ

2.1 Ելնելով կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորության աստիճանը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ Համալսարանում դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են երկու խմբի՝

ա) քննությամբ ավարտվող,

բ) ստուգարքով ավարտվող:

2.2 Առկա ուսուցման ձևում դասընթացից ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականը ձևավորվում է ըստ չորս բաղադրիչների՝

ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,

բ) ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատում,

գ) կիսամյակի ընթացքում դասընթացի ընթացիկ գնահատում (միջանկյալ քննություն, ստուգարքի դեպքում՝ ընթացիկ ստուգում),

դ) դասընթացի վերջնական գնահատում (ամփոփիչ քննություն, ստուգարքի դեպքում՝ ամփոփիչ ստուգում):

2.3 Հեռակա ուսուցման ձևում դասընթացից ուսանողի վերջնական հաշվարկային գնահատականը ձևավորվում է ըստ երեք բաղադրիչների՝

ա) ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասահաճախումների հաշվառման միջոցով,

բ) ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքների) գնահատում,

գ) դասընթացի վերջնական գնահատում (ամփոփիչ քննություն, ստուգարքի դեպքում՝ ամփոփիչ ստուգում):

2.4 Դասընթացի յուրաքանչյուր բաղադրիչի համար սահմանված առավելագույն միավորը 100 է:

2.5 Քննությամբ ավարտվող դասընթացի դեպքում, անկախ ուսումնական պլանով նախատեսված աշխատածավալի և պարապմունքի ձևի, նախատեսվում է պարտադիր 1 միջանկյալ քննություն:

2.6 Առկա և հեռակա ուսուցման ձևերում դասընթացի գնահատումն իրականացվում է համաձայն հավելված 2-ի, որտեղ տրված են բոլոր դասընթացների գնահատման առանձին բաղադրիչների համար սահմանված միևնույն տոկոսային արժեքները:

2.7 Միջանկյալ և ամփոփիչ քննությունները կարող են իրականացվել գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային թեստային եղանակով՝ ռեկտորատի որոշմամբ:

Հաճախումներ

2.8 Համալսարանի ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի՝ դասահաճախումների հաշվառման միջոցով գնահատումը, դասընթացի վերջնական հաշվարկային գնահատականի ձևավորման էական բաղադրիչ է:

2.9 Դասահաճախումների հաշվառման միջոցով ուսանողի՝ դասընթացին մասնակցության աստիճանի գնահատումը կատարվում է քննական կամ ստուգարքային առարկայի տեղեկագրում համաձայն հավելված 3-ի:

Ինքնուրույն աշխատանք

2.10 Ինքնուրույն աշխատանքն ուսանողի գիտելիքների գնահատման բազմագործոն համակարգում դասընթացի վերջնական հաշվարկային գնահատականի ձևավորման էական բաղադրիչ է, որը չներկայացնելու և/կամ չպաշտպանելու պարագայում չի սահմանափակվում քննությանը մասնակցելու ուսանողի իրավունքը:

2.11 Ինքնուրույն աշխատանքների* թեմաների ցանկը, կատարման ձևը, գնահատման չափանիշները և ռուբրիկները, ներկայացվող պահանջները և պաշտպանության կարգը հաստատվում են համապատասխան ամբիոնի կողմից և ուսանողներին ներկայացվում դասերի մեկնարկից հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

2.12 Ինքնուրույն աշխատանքի հանձնումն ու պաշտպանությունը կազմակերպվում է կիսամյակի ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանին նախորդող շաբաթը:

2.13 Ինքնուրույն աշխատանքի գնահատականի մասին ուսանողը տեղեկացվում է պաշտպանությունից անմիջապես հետո:

2.14 Ինքնուրույն աշխատանքի գնահատումը կատարվում է քննական կամ ստուգարքային առարկայի տեղեկագրում (հավելված 3) քննությունից կամ ստուգարքից առնվազն մեկ շաբաթ առաջ:

2.15 Ինքնուրույն աշխատանքը վերահանձնման ենթակա չէ:

2.16 Հեռակա ուսուցման համակարգում ինքնուրույն աշխատանքի հանձնումն ու պաշտպանությունը կարող է թույլատրվել նաև գրաֆիկով նախատեսված վերահանձնումների գործընթացից 3 օր առաջ: Նշված ժամկետում հանձնելու դեպքում այն կհաշվառվի ուսանողի վերջնական գումարային գնահատականում:

Միջանկյալ քննություն կամ ընթացիկ ստուգում

2.17 Միջանկյալ քննությունը դասընթացի վերջնական հաշվարկային գնահատականի ձևավորման էական բաղադրիչ է, որին չմասնակցելու դեպքում չի սահմանափակվում վերջնական քննությանը մասնակցելու ուսանողի իրավունքը:

2.18 Միջանկյալ քննությունը կիսամյակի ընթացքում դասընթացի ուսումնասիրված բաժինների յուրացման մակարդակի ստուգման և

---

* Որոշ առարկաների դեպքում կարող է լինել լաբորատոր աշխատանք կամ նախագիծ (ռեկտորատի որոշմամբ):

գնահատման ձև է, որի անցկացման ժամկետները որոշվում են ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի և հաստատվում Ուսումնական գործընթացի կառավարման վարչության կողմից:

2.19 Միջանկյալ քննության վերահանձնում չի թույլատրվում:

2.20 Միջանկյալ քննությանը չներկայանալը համարվում է հարգելի միայն այն դեպքում, եթե ուսանողը հարգելի բացակայության պատճառը վերանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան փաստաթղթերը ներկայացնում է դեկանատ:

2.21 Հարգելի պատճառով միջանկյալ քննությանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցով:

2.22 Միջանկյալ քննության կամ ընթացիկ ստուգման գնահատումը կատարվում է քննական կամ ստուգարքային առարկայի տեղեկագրում համաձայն հավելված 3-ի:

Ամփոփիչ քննություն կամ ամփոփիչ ստուգում

2.23 Ամփոփիչ քննությունը կամ ամփոփիչ ստուգումը դասընթացի վերջնական հաշվարկային գնահատականի ձևավորման պարտադիր բաղադրիչներ են:

2.24 Ամփոփիչ քննությունը կամ ամփոփիչ ստուգումը անցկացվում են կիսամյակի վերջում՝ ըստ ուսումնական պլանների սահմանված ժամկետների:

2.25 Ամփոփիչ քննության համար նախատեսված թեստերում կամ տոմսերում միջանկյալ քննության համար նախատեսված հարցեր չեն ներառվում:

2.26 Ամփոփիչ քննության կամ ստուգման գնահատումը կատարվում է քննական կամ ստուգարքային առարկայի տեղեկագրում (հավելված 3) էլեկտրոնային թեստային եղանակով հանձնելու դեպքում Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից ամբիոնին տվյալների տրամադրման օրը, գրավոր կամ բանավոր քննության դեպքում՝ քննության հանձման օրը (եթե արդյունքները հրապարակելուց հետո մեկ ժամվա ընթացքում բողոք-դիմումներ չկան):

2.27 Ամփոփիչ քննությանը կամ ամփոփիչ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն այն դեպքում, եթե ուսանողը հարգելի բացակայության պատճառը վերանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան փաստաթղթերը ներկայացնում է դեկանատ, բայց ոչ ուշ, քան մինչև վերահանձնումների ավարտը:

2.28 Հարգելի պատճառով ամփոփիչ քննությանը կամ ամփոփիչ ստուգմանը չներկայացած ուսանողը կարող է հանձնել այն առարկայական պարտքերի մարման շրջանում, ինչը չի սահմանափակի ուսանողի՝ փոխատեղման մրցույթին մասնակցելու իրավունքը:

2.29 Եթե դասընթացի վերջնական գումարային միավորը փոքր է 40-ից, կազմակերպվում է դասընթացից վերահանձնում (ամբողջական տոմսով կամ թեստով՝ ներառած և՛ միջանկյալ, և՛ ամփոփիչ քննությունների հարցերը):

2.30 Ուսանողին հնարավորություն է տրվում յուրաքանչյուր դասընթացը, ներառյալ պարտքերի մարման շրջանը, հանձնել ոչ ավելի, քան երեք անգամ (մեկ հանձնում, երկու վերահանձնում):

2.31 Առկա ուսուցման ձևում պարտքերի մարման շրջանի համար վերջնաժամկետ է սահմանվում ամառային քննաշրջանի դեպքում մինչև նոր ուսումնական տարվա սեպտեմբերի 15-ը, ձմեռային քննաշրջանի դեպքում՝ ըստ ժամանակացույցի:

2.32 Հեռակա ուսուցման ձևում պարտքերի մարման շրջանի համար վերջնաժամկետ է սահմանվում հաջորդող կուրսի առաջին կիսամյակի լսարանային պարապմունքների ընթացքը (երեք շաբաթ):

3. Ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգ

3.1 Ուսանողն իրավունք ունի բողոքարկելու գիտելիքների ստուգման ցանկացած բաղադրիչից ստացած գնահատականին համաձայն չլինելու դեպքում:

3.2 Եթե գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացն իրականացվել է էլեկտրոնային թեստային եղանակով, ապա ուսանողի կողմից էլեկտրոնային թեստային քննությունների արդյունքների բողոքարկումն իրականացվում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում էլեկտրոնային թեստային քննությունների իրականացման կանոնակարգի «Էլեկտրոնային թեստային քննությունների» բողոքարկման ընթացակարգի համաձայն:

3.3 Եթե գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացն իրականացվել է գրավոր եղանակով, ապա ուսանողի կողմից գրավոր քննության արդյունքների բողոքարկումն իրականացվում է քննության արդյունքները հրապարակելուց հետո մեկ ժամվա ընթացքում՝ ներկայացնելով դիմում համապատասխան ֆակուլտետի դեկանին:

3.4 Երկու աշխատանքային օրվա ընթացքում ստեղծվում է հանձնաժողով դեկանի (տեղակալի) նախագահությամբ, ամբիոնի վարիչի, առարկան դասավանդող դասախոսի կազմով, որն ուսանողի ներկայությամբ կազմակերպում է գրավոր աշխատանքի քննարկումը:

3.5 Հանձնաժողովը, ստուգելով ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման համապատասխանությունը հարցատոմսի հարցերի պատասխաններին, կայացնում է որոշում՝

ա) գնահատականն անփոփոխ թողնելու կամ

բ) գնահատականը փոփոխելու մասին:

3.6 Բողոքարկման արդյունքի վերաբերյալ հանձնաժողովը կազմում է ակտ (հավելված 4):

4. Եզրափակիչ դրույթներ

4.1 Սույն կանոնակարգի ընդունմամբ ուժը կորցրած են ճանաչվում Համալսարանի՝ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգը կարգավորող իրավական ակտերը: Եթե նմանաբնույթ

իրավական ակտերը կարգավորում են նաև այլ հարաբերություններ, ապա ճանաչվում են մասնակի ուժը կորցրած:

4.2 Կանոնակարգը, դրա փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

<u>Հավելված 1</u>

Աղյուսակ 1

Գիտելիքների գնահատման համակարգ

Ռեյտինգային միավորները	Գնահատման սանդղակը		Համապատասխան տառային և թվային գնահատականն ըստ ECTS-ի	
	5 միավորային սանդղակով	20 միավորային սանդղակով	տառային	թվային
95-100	5	20	A+	4,0
87-94		19	A	4,0
81-86		18	A-	3,7
75-80	4	17	B+	3,3
67-74		15-16	B	3,0
61-66		14	B-	2,7
55-60	3	13	C+	2,3
46-54		9-12	C	2,0
40-45		8	C-	1,7
<40	2	անբավարար	D	0
0		չներկայացած	F	0
≥40		ստուգված	S	-
<40		չստուգված	U	-

Հավելված 2

Աղյուսակ 1

Առկա ուսուցման ձևում

գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներ

Բաղադրիչ	%
Հաճախումներ	15
Ինքնուրույն աշխատանք	20
Միջանկյալ քննություն/ընթացիկ ստուգում	30
Ամփոփիչ քննություն/ամփոփիչ ստուգում	35

Աղյուսակ 2

Հեռակա ուսուցման ձևում

գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներ

Բաղադրիչ	%
Հաճախումներ	15
Ինքնուրույն աշխատանք	20
Ամփոփիչ քննություն/ամփոփիչ ստուգում	65

Հավելված 3

Քննական Տեղեկագիր/Ստուգարքային տեղեկագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ N _____

2021 - 2022 ԹԹ. ՈՒՍ ՏԱՐՎԱ 2 ԿԻՍԱՄՅԱԿ 2022-06-09

Ֆակուլտետ — Ագրարային ճարտարագիտության

Մասնագիտություն — Հողաշինարարություն, հողային կադաստր__կուրս 4 _հոսք 1

Առարկա — Հողային իրավունք

Դասախոսի ազգանունը, անունը — Կարապետյան Արամ

Հ/Հ	Ուսանողի ազգանունը, անունը	Ստուգման գրքույկի համարը	Կրեդիտը	Գնահատման գործոնները (%) և դրանց փաստացի ստացած միավորը 100 միավորային համակարգով*				Բազմագործոնային համակարգով հաշվեկշռված գնահատականը			
				Հաճախում	Ինքնուրույն աշխատանք	Միջանկյալ քննություն	Ամփոփ քննություն (≥40)	100 միավորային համակարգով	20 միավորային համակարգով	Տառային համակարգով (A+-ից C-)	Դասախոսի ստորագրություն
				15	20	30	35				
1	Հովհաննիսյան Հարություն Հովհաննեսի	1234	4	94	100	100	90	96	20	A+	
2											
3											

- Ամփոփիչ քննության ներկայացած ուսանողների թիվը 1
- Ստացած գնահատականների թիվը 18-20
14-17 1
8-13
0-7
- Չներկայացած ուսանողների թիվը
- Չթույլատրված ուսանողների թիվը
* Գործոնները գնահատվում են 100 միավորային համակարգով

Դեկան _____ Ամբիոնի վարիչ _____

Հավելված 4

Ձև

Ա Կ Տ

Քննությունների բողոքարկման արդյունքում հանձնաժողովի կողմից կազմված

- Վայրը՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- Օրը՝ ,,,,,,,,,,,202 թ.
- Ժամը՝ ,,,,:,,,,

Մասնակցում էին՝

1. _____
Ֆակուլտետի դեկան (հանձնաժողովի նախագահ)՝ _____

2. _____
Ամբիոնի վարիչ ՝ _____

2. _____
Առարկան դասավանդող դասախոս՝ _____

1. Քննությունների արդյունքների բողոքարկման հանձնաժողովը որոշեց

_____

_____

_____

_____

_____